

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԻՆՏԵՐՆԻ

# ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրության մէջ:

Մեր հասցեն. Тифлиси, Редакция «Мелік».

Կամ Тифлиси, Редакция «Мелік».

Տեղեկություն № 253.

Միտոգրությունը բաց է առաջատար 10—2 փոստի:  
(բացի կիրակի և առաջ օրերից):

Յայտարարությունը ընդունվում է առանց վճարի:

Յայտարարությունները համար վճարում են  
խառնաձայնի վրա առաջատար 10 կոպեկով:

Տեղեկություն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Մամուլի ձայնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

Մամուլ. Ռուսաց ներկայացուցիչները, Նամակի  
թիվում. Նամակ Ստաբուլից. Ներքին լուս-  
նի.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուս-  
նի.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում:

## ՄԱՄՈՒԼԻ ԶԱՅՆԸ

Մամուլը մեծ ոյժ է, բայց նրանից չը  
պետք է պահանջել այն, ինչ որ նա կա-  
նոյ չէ անել:

Մամուլը, օրինակ, չէ կարող արտաբերել  
գանգառու գանձապահին և երեցփոխին  
իրանց պաշտոններին, բայց նա կարող է  
մերկացնել նրանց կատարած գեղձուկները,  
ապացուցանել նրանց փնտախարությունը  
և ապկարությունը ու այդպիսով դիւրաց-  
նել նրանց հեռացնելու կամ զսպելու  
գործը:

Մամուլը չէ կարող գիւղացու ձեռքը  
տալ գուլթան, ցաքան, զարի մեքենայ,  
ազնիւ սերմացուներ, բայց նա կարող է  
խօսել այդ առարկաների օգտակարության  
մասին և խորհուրդ տալ ձեռք բերել նը-  
րանց գիւղական տնտեսության համար:  
Մամուլը չէ կարող ինքը գրադիր գիւղա-  
յինների համար նոր բնակարաններ շինե-  
լով, ուղիղ և լայն փողոցներ գցելով, կա-  
նույրներ կառուցանելով, բայց նա կարող  
է շարք յօդուածներ նուրբիլ այդ և ուրիշ  
խորհրդների հոգաբարձի մասին:

Նոյնպէս մամուլը չէ կարող գեղեր բա-  
ժանել իր հիւանդ ընթերցողներին, վարկ  
բանալ զբաղի կարօտ գիւղացիներին,  
հեռացնել և պատժել վաշխառուին, բայց  
իր յօդուածներով նա կարող է տարածել  
առողջապահական գիտելիքներ, յորդորել  
հիմնելու գանազան տեսակ կրեդիտային  
հաստատութիւններ ժողովրդի համար,  
արձանագրել հարստահարութեան դէպքե-  
րը և մշակել օգնութեան մի շարք ծրա-  
դիրներ:

Որպէս զի մամուլի ձայնը հասնի իր  
փերջական նպատակին, կարեւոր է, որ  
կանքի մէջ գործող մարդիկ աշակցեն մա-  
մուլին և փոխադարձ օգնութեամբ հաղոր-  
դեն մամուլին այն կարիքների մասին, որոնք  
կանքի մէջ գաղափար են, և ժողովրդակա-  
նացնեն կենքի մէջ այն խորհուրդները  
ու խրատները, որ յայտնել են հեղինակա-

ւոր մտքերը մամուլի մէջ: Միայն այդ  
փոխադարձութեամբ, մամուլի և կանքի  
մէջ գործողների սերտ կապակցութեամբ  
կարելի է իրականացնել կերպով նպատակ  
թէ մամուլի բարգաւաճման և թէ կանք-  
նի խնդիրների գործնական աշխույժման:

Մամուլը մեծ ոյժ է, բայց նա ունի  
ազդեցութեան որոշ շրջան, որից դուրս  
պէտք է գործեն հասարակութեան զանա-  
զան խաւերում գործող մարդիկ, որպէս  
զի կանքը կարող լինի իրագործել այն  
բոլորը, ինչ որ մշակվում է մամուլի էջե-  
րում:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մի նոր օրգան էլ աւելացաւ կովկասեան  
մամուլի ընտանիքում: Բազում հոկտեմբերի  
18-ից սկսեց հրատարակվել «Вакс» անունով  
մեծ ամսագրային թերթը: Սա արդէն երբեք  
ամենօրեայ մասնաւոր լրագրին է նախա-  
մայրաքաղաքում Երեւոյթը ուրախալի է: Եր-  
կար ժամանակ Բազում գոյութիւն ունէր  
լրագրական մօնօպօլիա, այնտեղ հրատարակ-  
վում էր միայն մի մասնաւոր լրագիր, որ միակ  
դատաւորն էր հասարակական բոլոր հարցերի  
մէջ: Մօնօպօլիան միշտ միակողմնակի էր,  
աղանաւորութիւն էր և առաջացնում Այդ երե-  
ւոյթը ցանկալի էր: Մեր երկրի տնտեսական  
կենտրոնում ամենամեծ խնդիր դեր կատարող  
մի այնպիսի կենտրոնում, ինչպիսին է Բազում:  
Եւ ահա ներկայ տարվանից մօնօպօլիայի տե-  
րապետութիւնը խախտված է Բազումում: ամառ-  
վանից սկսեց հրատարակվել «Вакс» անունով  
լրագիրը, իսկ այսօր կենքը է առա-  
նում վերջինից: Մեծ գրական-քաղաքական լը-  
րագիրը: Ուրախալի է այս երեւոյթը մամու-  
լանք այն պատճառով, որ նոր լրագիրը շատ  
համակրելի ուղղութեան է հետեւում: Դժբախ-  
տաբար, մեզ չէ ուղարկվում Բազումի նոր լրա-  
գիրը, բայց մենք չենք կարող չարձանագրել  
այստեղ մի նշանաւոր երեւոյթը, որ մեր աե-  
ղական մամուլը հարստանում է մի նոր, ազնիւ,  
առողջամիտ լրագրով: Դատելով այն արտաբե-  
րականութիւնը, որոնք երեւալից Բազումի և Թիֆ-  
լիսի լրագիրների մէջ, մենք տեսնում ենք, որ  
«Вакс» լրագիրը խոտանում է հետեւել ուս-  
տաց մամուլի լաւագոյն արտաբերաններին: Մի-  
շնե լրագրի լայն տեսնելը տարածվել էին լու-  
րեր, թէ ի՞նչ կը լինի տարաշաղկաւ էջերի  
գործունէութեան հետեւող: Այժմ լրագիրը

իր առաջին համարում եւսանդուն կերպով հեր-  
բում է այդ բամբասանքը եւ ասում է:

Խորթ լինելով վայրենի նախապաշարմունք-  
ներին, խորագրէս զնախատելով ազնիւ եւ  
ազատ խօսքի մեծ ոյժը, մենք կաշխատենք  
մեր երկրի բարօրութեան համար: Լաւ յիշե-  
լով, որ միայն հասարակական օյժերի ազատ  
զարգացման պայմանում կարող ենք լաւա-  
գոյն ապագայի յոյսն ունենալ, մենք անշեղ  
կը սկսենք կենքի մէջ անցկացնել մարդ-  
կութեան լաւագոյն եւ ազնուագոյն ներկա-  
յացուցիչների նուիրական ձգտումները:

Մենք գործ չունենք Անդրկովկասի այս  
կամ այն ժողովրդի նեղ-ազգայնական շահե-  
րի հետ: Թէ ուսուր, թէ վրացին, թէ հայը,  
թէ մահմադականը մեր աչքում ամենից ա-  
ռաջ երեւան են գալիս իբրեւ մի հասարա-  
կութեան անդամներ:

Հաւատարմի մնալով ուստաց մամուլի գրա-  
կան լաւագոյն արտաբերաններին, մենք չենք  
գործի Անդրկովկասի ազգայնականութեան ցե-  
ղային կրքերը: Մեր համոզմունքն է, որ մի-  
այն հեռացնելով ազգայնական խտրութիւն-  
ները, միայն զարգացնելով շահերի ընդհան-  
րութեան փոխակցութիւնը՝ մեր երկրը կա-  
րող է ճանապարհ բաց անել դէպի կուրու-  
րական կեանք:

Այս գեղեցիկ խօսքերը, պէտք է յուսալ,  
չեն մնալ գեղեցիկ խօսքեր, այլ նոր լրագրի  
ամբողջ էութիւնը կը կազմեն: Հրաշքներ մենք  
չենք պահանջում եւ ներկայ ժամանակներում  
պահանջել էլ չենք կարող: Շատ եւ շատ մեծ  
կը լինի լրագրի ծառայութիւնը, եթէ նա կա-  
րողանայ տեղական կեանքի մէջ անկեղ ազնիւ-  
անկաշառ, ընդառաջող եւ մերկացնող հրապա-  
րական խօսքի արմատները: Բազում կովկա-  
սեան ոչ մի քաղաքի պէս չէ: Բազում նախ եւ  
առաջ ամենի կողմից ճանաչված է իբրեւ «Սօ-  
ցիալ-Դեմոկրատ» Դա այն տեղն է, ուր կապիտալ  
հէքիտակային ուժի ապարանքներ է կառուցա-  
նում եւ անկեղ զոհեր է փռում: Դա այն հողն  
է, որի վրա օրէցօր բազմանում են «սոցիալ-  
րաժները եւ վերաբոլմաները»: Այնտեղ ազ-  
նիւ, անկեղ ապագական խօսքը, նա, որ է-  
մանապէս ժողովրդականութեան ետեւից չէ  
վազում, այլ նայում է իր պաշտօնի իրեւ մի  
պատերազմի, մրցութեան, իբրեւ սրբազորու-  
թեան, մեծ, պատուաւոր, մարդասիրական գործ  
ունի կատարելու: Ամբողջ սրտից ցանկանում  
ենք, որ այդ սրբազան պաշտօնը արժանաւոր  
կերպով տանէ Բազումը ոչ միայն նոր, թարմ  
մամուլը: Իբրեւ մէկը կովկասեան մամուլի  
հնազոյն օրգաններից, իբրեւ մի լրագիր, որ  
երեսուն տարիների ընթացքում, սկսած իր  
հիմնադրութեան առաջին օրից, միշտ քաղաքի  
է ազդերի համեմատութիւն եւ եղբայրութիւն,  
«Մշակը» չէ կարող կատարել ազդեցութիւն չը

մաղթել այն օրգաններին, որոնք աշխարհ են  
գալիս ազնիւ ձգտումներով, որոնց գոյութեան  
նպատակն է ծառայել մեր երկրի առաւոր,  
կուրուրական շահերին, մեր խաւար, անպա-  
րաստ, գոյութեան կուր մէջ քրտինք թափող  
ժողովրդին: Ուստի եւ ողջունում ենք «Вакс»  
լրագրի հրատարակութիւնը եւ անկեղծ ուրա-  
խութիւն ենք յայտնում, որ կողմասը ունի մի  
նոր ազնիւ հրապարակասուական օրգան էր:  
Յիշեցնում ենք մեր ուս եղբայրակիցներին,  
որ տեղական լեզուներով հրատարակվող լրա-  
գիրներն էլ ունեն իրանց մեծ կոչումը, որ նրանք  
կովկասի պէս մի բազմալեզու եւ բազմալեզու  
երկրում կարող են եւ պիտի կատարեն շատ  
նշանաւոր դեր: Համանման առաջադրական  
գաղափարներով առգործած լրագիրները պէտք  
է միմեանց ձեռք ձեռք տուած աշխա-  
տեն: Եւ այս համեմատութեան մէջ ուս,  
հայ եւ վրաց լրագիրները կարող են կազ-  
մել մի գաղափարական զինակցութիւն, եթէ  
ուշադիր լինեն դէպի միմեանց, եթէ ամեն  
մէկը փոխադարձ յարգանքով աշխատէ պաշտ-  
պանել, զարգացնել, տարածել միմեա լու-  
սաւոր, ազնիւ մտքերը իր ընթերցողնե-  
րի շրջանում: Այս պատճառով շատ ցանկալի  
է, որ զանազան լեզուներով հրատարակվող  
այն լրագիրները, որոնք ուղղութեամբ մի ընդ-  
հանուր բանակին են պատկանում, աւելի մօտ  
լինեն միմեանց, աւելի ուշադրութեամբ լսեն  
իրար: Բարեբաղդաբար, այսպիսի մի գաղա-  
փարական զինակցութիւնը անօրինակ չէ մեր  
կովկասեան մամուլի պատմութեան մէջ: Բա-  
ւական է յիշել 1872—1876 թւականները, երբ  
«Тифлисский Вестник», «Մշակ», «Դեմոկրատ»  
եւ նոյն իսկ Բազումի նոր սկսված թերթերէն  
«Արմենի» միմեանց եղբայրաբար ձեռք էին  
մեկնել եւ մի արհուր համեմատյալութեամբ  
պաշտպանում էին մեր ժողովրդի մտաւոր-բա-  
րոյական շահերը, առանց ազգայնական եւ  
կրօնական խտրութիւնների: Մեր հայրերը, ու-  
րեմն, գիտէին միմեալ գաղափարի չափը: Եւ  
միմեալ մեզ, որդիներին, վիճակված է միայն  
նախանձով նայել մեր հայրերի առաջնորդութիւ-  
ններին: Ոչ, մենք համոզված ենք, որ առաջը-  
նութիւնները ժամանակի հետ կապ չունեն եւ  
նոր սերունդները միայն հիացողներ չը պիտի  
լինեն անցեալի վրա, այլ եւ պիտի գեղեցիկ  
անցեալը նոյնքան գեղեցիկ ներկայ դարձնեն...

## ՌՈՒՄԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ռուսաց դրամատիկական արտիստների խում-  
բը, Կրասնովի ղեկավարութեամբ, շարունա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թուղթի տպագրութիւններ)

XXXIV

Ստորերկրեայ մի աներեւոյթ ոյժ մի խելա-  
գար մօտենում, հակադական զաւանգանքի մի  
օրում, մի զարհուրելի օրում, որի յիշատակը  
կարելի է դարերի մէջ անհետ, երկունքի խօլա-  
կան թափով դէպի վեր է շարժել լեռան ամ-  
բողջ կատարը եւ նրա տեղ բացել է մի հա-  
զին սկաւառակ, մի անդունդ, մի վիհ, ոչ, մի  
դժոխք: Մենք կանգնել ենք այժմ այդ ան-  
դունդի շրթին եւ ցած ենք նայում ամենից,  
որ, չը գիտես ինչու, երկրից պատուտում է իր  
արգանքը եւ կտոր-կտոր դուրս է շարժում  
դէպի անհունը: Դժոխք թանձր ծուխը եւ գո-  
լորէն բռնել են այդ դժոխային վիհը: Ոչինչ  
չէ երեւում, բայց լսվում են այնպիսի ձայներ,  
որոնցից մարդու էութիւնն ամբողջապէս օստան-  
վում է: Ասես մի հազանադուր լրվէ՞ք է, որ  
գահավիժվում է լեռան կատարից, կատարից ա-  
հիւճներ որոնք մնչկում են, մի փոթորիկ՝ որ  
ոռնում է, մի լեռ՝ որ փուլ է գալիս, կողկան-  
ձող զաւանգներ, արտաձայն լացողների ճիչեր,

եռուն կաթսաներ, ձորձառներ, շառաչիւն,  
շաչիւն, զրնդիւն, եւ այս ամենը մերթ իրար  
խառնված, միաժամանակ, մերթ իրար ետեւից,  
բարձր ու ցածր, մերթ խուլ, մերթ սուր կեր-  
պով գալարվում են, վեր բարձրանում արգան-  
դից դէպի կատարը, ապա կրկին խորտակվում  
եւ գնում անդունդները:

Երեւմի ջրային փշուր է դէպի մեզ, ծծումքը  
իր սուր հոտով լցնում է մեր աչքերն ու  
առնունքը: Մի վայրկեան կորչում ենք ամպե-  
րի մէջ, հազում ենք օստտիկ: Եւ այս խնդրող  
ամպն անցնում է քամու թափով, եւ զարձակ  
երկրւոյ կացած, աչքեր չառձ զայր ենք  
նայում, որտեղից լսվում են ձայները: Ոչինչ  
չէ երեւում: Մութ է այնտեղ: Ժլի ու գործ-  
չու ամպերը հազար ու մի ալիքով, հրէշա-  
ւոր ձեւերով, ինչպէս մի անասելի մրրիկով  
մղված՝ պտոյտներ են գործում այդ կաւա-  
րարութեան մէջ, անդունդների վրա, դիւ-  
շում են պատերին, տեղ են փնտռում փախ-  
չելու, երկնքում ապաստան փնտռելու, կա-  
ծեա սուկում են իրանցից ներքեւ կատարվա-  
ծից: Սակայն ամպերը փախչել ազատվել չեն  
կարողանում, իրանց ճիւղերի մէջ զարկվում  
որորում են հազար ու մի ձեւերով եւ շարուն-  
ակվում են ծածկել այդ անդունդի բերանը,  
որի տակ, խորքից, շատ խորքից, մեր ոտների  
տակ, լսվում է մի խուլ զրնդիւն: Լեռը դողում

է, տնքում է ցաւով: Ետերերկրեայ հարուած-  
ներն ահագին են: Իսկ մենք բռնված ենք օտ-  
կումով:

Այդ աղմուկից, գոռում-գոչումից, ստորերկ-  
րեայ որոտմունքից շատ աւելի ճնշող, օստա-  
նեցուցիչ է երեւմի վրա հասնող լուռութիւնը:  
Դա տեսնում է միայն մի վայրկեան, որի ըն-  
կացքում մարդ չունի բռնած, բերանաբաց,  
ամբողջապէս լուռութիւն դարձած՝ սպասում է:  
Թէ ինչ մի աներեւակային բան, մի ոչնչացնող  
որոտմունք պիտի լսէ, եւ սկսվում է... յան-  
կարծ իրար ետեւից այնպիսի ձայներ, այնպի-  
սի դղրդիւն, որ ծնկները ծալվում են, դողում,  
եւ մարդ ջնջված ու եթերացած կորչում է՝ չը  
գիտես ուր: Փոփ անթափանցիկ խաւարն էլ  
աւելի սառեակցնում է անդունդների օտարա-  
փը: զգում ես, որ այնտեղ, այն մութ ու ախ-  
կած զոյղի տակ կատարվում է մի աննկարա-  
գրելի, մի անասելի բան, որ տարբեր աւերա-  
ծի եւ ոչնչութեան այդ խօլական երգով խօ-  
սում է մի անայտ ու զարհուրելի բանից:  
Նայում ես իմանալու համար, թէ ինչն է ե-  
ռում, ճշում, ոռնում, լալիս այդ դժոխքում:  
Նայում ես, ոչինչ չես տեսնում, եւ միայն խա-  
ւարն է ամեն ու վրա լինում, նրա սեւ ծայ-  
րերն են փռվում առաջը եւ հոգիդ պատում  
անորոշ երկիւղի խեղճող զգացմունքով:  
Դա մի օստակացաւ: Նրա մի ուժեղ պտոյտը

չը գիտես ինչպէս կատարից ներս ընկաւ այն  
ահագին բացուածքի մէջ, ուր կատարվում է  
ընտելեան ոյժերի պայքարը, նրա աւերիչ  
խնկութիւնները: Փամին իրար խառնեց այդ ա-  
հագին սկաւառակի մէջ խաւարի ծոցում գա-  
լարվող ամպերը, որոնք աւելի կատաղաբար  
ու արագութեամբ սկսեցին սառաւորել ամ-  
բունքների վրա, ձայներն ու օրոտը դարձան  
աննկարագրելի եւ յանկարծ, կարծես կապան-  
ներէջ ազատված՝ դուրս թռան այդ դժոխքից,  
ոչնչացնելով դէպի լայնաբերկ կապուտակը: ամբողջ  
սկաւառակը բացվեց մեր առաջ: Այժմ տեսա-  
րանք վերջին ահագին է: Մենք տեսնում ենք  
նրա խոնավ, լալումն եւ ծծումքի բաց շերտով  
ծածկված պատերը: Բոլորովին ներքեւ, խորու-  
թեան մէջ, երեւում են երկու ահագին հրա-  
բխային բերաններ, որպէս երկու վտանգ  
հակադական թնդիւններ: Ստորերկրեայ մի հրային  
մրրիկ է խաղում այնտեղ, եւ նրա թափով բո-  
ցերը մեծամեծ խաւերով դուրս են ձգվում բար-  
ձր, բարձր, եւ թանձր ծխի ողորների հետ խառն-  
ված, իսկ նրանց հետ միապին շիկացած, կրակ  
կտրած մեծ ու փոքր քարեր ձգվում են չեղտակի  
թափով, ուղղափայտացաւ դէպի վեր, վզվում են,  
չվզվում, շաչում են՝ ինչպէս փոթորիկի առաջ  
հեծող ծառեր, եւ ապա պտոյտներ գործելով  
ընկնում են կամ բացուածքի շրթներին, կամ  
հենց նոյն անցքի մէջ, օրտաղից մի վայրկեան

Ա. Ահարոնեան



